№ 138 Յուլիսի 31 Հաբաթ

1882

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Յուլիսի 31 Հաբաթ № 138

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զանազանութիւն չէն տեսնում։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Արդուվինից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Եգիպտական հարց։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ծեր քահանայ։ Նկատողութիւններ հայերի մասին։

ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ ՉԵՆ ՏԵՍՆՈՒՄ

—

Մոսկվայից մեզ ուղարկված և ներկայ համարում տպված նկատողութիւնը ապացոյց է որ ամենատարրական, ամենապարզ միտքը շատ անգամ զարգացած մարդկանց, ինտելիգենցիային դժուար է, նոյն իսկ անհնարին է լինում բացատրել։

Զարմանալի է որ մեզ չեն ուզում հասկանալ մարդիկ։ Մի՞թէ մինչև այժմ չեն համոզվում որ Գլադանէլիի և սրա նման փեհլեվանների խաղերը կօպիտ ու վայրենի են, նոյն իսկ իրանց անտաշ ձևերի կողմից և չեն կարող հակակրելի չը լինել ճշմարիտ լուսաւորված մարդկանց համար, որովհետև բաժին են լինում մի քանի, զօրեղների, ֆիզիկապէս զարգացած մի քանի հրէշների և երբէք ամբոխի մէջ ընդհանրանալ, տարրանալ չեն կարող իրանց բացառական բնաւորութեան շնորհով։

Անգիտակցաբար ամբոխի համար այդ տեսակ մարդիկ միշտ կը մնան գլադիատօրներ և բարոյական սկզբունք չունեցող ամբոխը նրանց վրա թէև միշտ հիացմունքով կը նայի, փողով էլ կը վարձատրի նրանց, բայց ինքն դարձեալ միշտ թուլամորթ կը մնայ։

Իսկ այդ տեսակ հասարակական երևոյթ, մեր կարծիքով, վերին աստիճանի անբարոյական բան է։ Այդ տեսակ երևոյթներ միշտ պատահել են ֆիզիկապէս ամենաթոյլ, ամենաընկած, բարոյապէս ամենափչացած ազգերի մէջ։

Ընդհակառակն մենք միշտ կողմնակից էինք մարդու մէջ ֆիզիկական և մտաւոր ոյժերի զարգացման հաւասարակշռութեան։ Իսկ այդ հետևանքին կարելի է հասնել միմիայն կանոնաւոր մարմնամարզութիւնը մոցնելով ազգի նոր, ուսումն առնող սերունդի մէջ։ Թող ուշադրութեամբ կարդան մեր յօդուածները և կը համոզվեն որ մեր իդէալը միշտ եղել է ֆիզիկական և մտաւոր կողմից հաւասարապէս զարգացած քաղաքացին և մեզ հակակրելի է թուլամորթ, ագէտ, պարապ ամբոխը, որ ինքն խորշում է ֆիզիկական աշխատանքից, առողջ վարժութիւններից, ինչպէս և խորշում է մտաւոր կեանքից,—բայց աւելի էլ մեծ հիացմունքով նայում է և փողով է վարձատրում կռւող երկու գլադիատօրներին, որոնք հեշտասէր ամբոխին բաւականութիւն տալու և նրանից փողով վարձատրվելու համար վտանգի մէջ են դնում իրանց սեփական կեանքը։ Ամենակօպիտ, վայրենի, բարբարոս, առողջութեան համար վնասակար, կեանքի համար վտանգաւոր խաղերով։

Մի՞թէ, ճշմարիտ, ամենատարրական միտք պէտք է հազար անգամ բացատրել, որպէս զի ինտելիգենցիան անգամ կարողանայ հասկանալ ամենապարզ գաղափար։ Մի՞թէ ոչինչ զանազանութիւն չեն գտնում մտաւորապէս և ֆիզիկապէս լաւ զարգացած քաղաքացու և վարձկան ու վայրենի գլադիատորի մէջ, կամ առաջինի և ֆիզիկական կանոնաւոր վարժութենից խորշող, մտաւոր զարգացումը ատող ագէտ հանդիսական ամբոխի մէջ, որ ինքն թուլամորթ, ագէտ և վախկոտ մնալով, սիրում է նայել ինչպէս ուրիշները կռւում են, ծափահարում է և ամենալի վարձ-պէս մի քանի ռուբլիներ է շպրտում իր ստոր կրքերին բաւականութիւն տուող, իրան ուրախութիւն պատճառող ջարդված, արիւնաթաթախ և կիսամեռ կռւողներին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

Յուլիսի 23-ին

Այս օրերը, լրագիրներում կարդացված սարսափելի հեղեղներից և նոցա վնասներից բոլորովին ազատ չեն նաև մեր կողմերը, թէև առ այժմ, ոչ այնչափ կորստաբեր։

Ձորոխ գետը, որ Օսմանեան երկրում, Տրապիզոնի հարաւային կողմը տարածված Տաւրոս լեռներից է բղխում և յետոյ ռուսաց սահմանը անցնելով, Բաթումի մօտ Սև ծովն է թափվում, Թիւրքաց սահմանի վրա, անգին հեղեղատից արգելվելով, 8—10 վերստ դէպի ետ է մղվել և լճացել է։ Այդ հեղեղատը եկել է Պարխար լեռներից Նիկզովան կոչված գիւղերի ձորամիջով։ Այժմ, ինչպէս պատմում են, մի փոքր ջուր միայն հոսում է ռուսաց սահմանը այդ հեղեղատի վրայից, որին խառնվում են Արդանուչի և Շավշէթի գետակները։ Ձորոխի այդ լճանալը մեծ վնասներ է տուել զլխաւորաբար Թիւրքաց գիւղերին։ Բայց աւելի սարսափելին այն է որ այդ հեղեղատը մի սաստիկ տարափից կարող է քանդվել և հաւաքված անգին ջուրը այն ատեն, կը պատէ շրջակայ գիւղերը, և կոխելով Արդուվինի գետափները, ամենայն ինչ կաւերէ. այդպիսի հեղեղից վտանգի մէջ է նաև Բաթում։ Թիւրքաց կառավարութիւնը, ի հարկէ, չի աշխատի այդ յայտնի վտանգի առաջն առնելու, վասն զի ռուսաց երկիրը կը կրէ վնասը։ Ուստի հարկ է ամենայն կերպիւ ուշադրութեան առնուլ այս ապագայ ջրհեղեղը և գործը իսկապէս լաւ քննվելուց յետոյ, եթէ պատմածին չափ վտանգաւոր է, անյապաղ պէտք է հարկաւոր կարգադրութիւններն անել. ժամանակը սուղ է և իւրաքանչիւր կորսած վայրկեան կարող է վտանգը յառաջացնել։

Հետզհետէ եկող տարափներից, Արդանուչ գետակն ալ կատաղած է։ Ջուրը միշտ դէպի ցամաք է ներս յարձակվում և քանդում։ 3 հայ երեխաներ, մին 13, միւսը 8, և երրորդը 4 տարեկան, ձուկ բռնելու դիտմամբ, գետեղերքը խաղացած ժամանակին, ջուրը դէպի ցամաք վազելով, յետաձգութեան ատեն այդ 3 երեխաներին ալ քաշում է և տալիս է հոսանքին։ Այնտեղ գտնվող մի ուրիշ հայ, այդ տեսնելով նետվում է ջուրը, և ազատում է ամենից փոքրին, իսկ միւս երկուքը անյայտանում են ջրի ընթացքում։ Երկրորդ օրը, գոցա դիակները արդէն գտնված լինելով, ծնողաց լաց ու ցաւի և ընդհանուրի վշտակցութեան ազդեցութեան ներքև հողի են տրված։

Այս դէպքից յառաջ Արդուվինցի մի հայ երիտասարդ Նիկոլ Ալեքսանդրեանցը, Ռուսաստանի Ֆինլանդիայի Սանկտ-Պետերբուրգ գաւառի Ֆինլանդիայի Ֆինլանդ գաւառակի Ֆինլանդ գիւղաքաղաքում գտնվելով, գրում է հետևեալ նամակը։

Ֆինլանդ գիւղաքաղաքի մոտ գտնվող գեղեցիկ անտառներ։ Ամենայն կանաչ է։ Ամենայն ինչ ծաղկում է։ Ամենայն ինչ զարգանում է։ Ամենայն ինչ ուրախանում է։ Ամենայն ինչ գեղեցիկ է։ Ամենայն ինչ գրաւիչ է։ Ամենայն ինչ հրապուրիչ է։ Ամենայն ինչ հիանալի է։ Ամենայն ինչ զարմանալի է։ Ամենայն ինչ սքանչելի է։ Ամենայն ինչ հրաշալի է։ Ամենայն ինչ... Ամենայն ինչ... Ամենայն ինչ...

տասարդ ալ խեղդված էր Ճորոխի մէջ լողանալու ժամանակ։ Սա իր չքաւոր հօրն ու մօր միակ որդին էր, որի վրա էր կայացել և նոցա յոյսը։

Այս տխուր պատահարները հաղորդելուց յետոյ հարկ է մի ուրախալի դէպք ալ հաղորդել։ Ասկից մօտ 12 տարի յառաջ մի Արղանուչցի երեխայ ընդունվել էր Վենետիկի Մխիթարեան վանքի մէջ։ Այդ երեխան այնտեղ կրթվելով, ուսումն աւարտելով և քահանայ ձեռնադրվելով ուղարկված է այժմ առաքելական քարոզչութեան ի Պարսկաստան։ Վերապատուելի հայր Կիւրեղ Եղոյեան, իր մեծաւորաց հրամանաւ, յարմար առիթ սեպեց այցելել իր հայրենիքն Արղանուչ, և հօր, մօր, եղբարց և ազգականների հետ տեսնվել 12 տարիների բացակայութենից յետոյ։ Ուստի եկաւ Արղուին և մի քանի օր կենալուց յետոյ դնաց Արղանուչ։ Շատ սուր աչքեր հարկաւոր չեն, որոշելու համար թէ ինչ անգին տարբերութիւն է տիրում Մխիթարեան կրօնաւոր վարդապետի և միւսների մէջ... Ինչ մեծ զանազանութիւն թէ ուսմամբ, թէ ազգայնութեան հոգւով և թէ կրթութեամբ, մինչև իսկ կրօնական զարդացմամբ.... Մենք կուզէինք շարունակել մեր այս խորհրդակցութիւն, բայց զանց ենք առնում առ այժմ, վասն զի, դժբաղդաբար, մեր ամենայն գրածն ու խօսածը ծուռն են հասկացվում.... Արդ, հայր Եղոյեան վարդապետ Արղանուչի մէջ, ուզելով մի քիչ դարման տանել այն խաւար տգիտութեան, որոնցով պատած է ժողովուրդը, ընտրեց երեք սրամիտ երեխաներ, Յովսէփ Միլիտոնեան, Յակոբ Բիրինչեան և Զատիկ Գաթէնեան, (Շավչէթցի), Ռափայէլ-Մուրադեան վարժարանի համար, ձրի ուսանողաց կարգում։

Երեխաները արդէն ճանապարհ ելան դէպի Վենետիկ։ Դոքա իրենց սրամտութեամբ, որը ինձ լաւ ծանօթ է, մեծ յառաջադիմութիւն կանեն, անպատճառ, այսչափ հայի որդիներ կրթող Մխիթարեան վարժարանում։ Մաղթենք փոյթ և զարդացումն ապագայ այդ ինտելիգենցիային։ Ուրեմն դարձեալ նոր լուսաւորիչներ կը պատրաստվեն մեր կողմերի համար... լաւ է անդան քան երբէք։

Մեր վերապատուելի քաղաքակիցը ամսոյս 15-ին ուղևորեցաւ դէպի իր սրբազան նպատակը։

Առաքել Սարուխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են յայտնել որ վաղը, կիրակի, օգոստոսի 1-ին, «Եւրոպա» այգիում լինելու է կոնցէրտ ներկայացումն յօգուտ հայ դերասանուհի օրիորդ Ս. Մէլիքեանի։ Կը ներկայացնեն «Նոր բնակարան» հայերէն և ռուսերէն լեզուով։ Զաւեշտում օրիորդ Մէլիքեան կերդէ «Ծիծեռնակ», նոյնպէս կերդէ Պ. Արտաշէս Ցակոբեան։ Սկիզբը 9 ժամին. մուտքը պարոնների համար 1 ռուբլ, տիկինների համար 50 կոպէկ։ Անտրակտներում կածի զինուորական նուագախումբ պ. Պալումբոի առաջնորդութեամբ։ Կոնցէրտ-ներկայացումից յետոյ կը լինեն պարեր։

—

Մեզ հաղորդել են հետեւեալ լուրը։ «Ամսիս 16-ին Ախալքալաքից մի վերստ հեռաւորութեամբ գտնվող Մավչանթաքա բլուրի տակ, թափարաւան գետում գտել են մի անյայտ մարդու դիակ։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են։ «Մեր քաղաքը այժմ վատ դրութեան մէջ է գտնվում անմաքրութեան կողմից։ Ամեն տեղ փողոցներում աղբ է ածված։ Մաքրութեան համար քաղաքը տարեկան 1200 ռուբլ է վճարում։ Խնդրում ենք մեր ոստիկանութեանը այդ կարևոր հարցի վրա ուշադրութիւն դարձնել։»

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Ձեր լրագրի մէջ շատ անգամ յայտնված միտքը թէ հայը դաղթելով իր հայրենի հողից, թէկուզ պահպանէր էլ իր կրօնը, կորցնում է իր ազգային յատկանիշները, հետզհետէ կորչում է,—շատ ուղիղ է։ Այո, իր ծննդավայրից հեռու կորցնում է իր բնաւորութիւնը, իր ինքնուրոյն պատկերը, բայց այն էլ պէտք է ասել, որ հայի մէջ սերը դէպի հողը, դէպի հողագործութիւնը, դէպի երկրագործութիւնը այն աստիճան զօրեղ է, որ հեռու կօլոնիաներումն էլ նա երկար ժամանակ շարունակում է պարապել երկրագործութեամբ, մինչև որ կատարելապէս, քայլ առ քայլ կը կլանվի վաճառականութեամբ։ Միայն այն բօպէից սկսած, կատարելապէս կորչում է հայութեան համար։ Օտարութեան մէջ թէ երկրագործ հայը և թէ վաճառականը երկուսն էլ մի և նոյն կրօնի, մի և նոյն դաւանութեան են պատկանում, բայց առաջինը աւելի երկար պահպանում է իր բնաւորութեան ինքնուրոյն, ազգային յատկանիշները, իսկ երկրորդը անհետանում, կորչում, ջնջվում է։ Որքան անյաղթելի հակում ունի հայը դէպի հողագործութիւնը նոյն իսկ իր ծննդավայրից հեռու, կարող են կենդանի օրինակ լինել Ղզլարի և Մոզդոկի այգեգործութեամբ պարապող հայերը և Նոր-Նախիջևանի շրջականերում գտնվող հինգ հատ հայոց մեծ գիւղեր, որոնք բացառապէս երկրագործութեամբ են պարապում։ Բայց իր հայրենի հողից հեռու, այլ և այլ կօլօնիաներում, հէնց որ հայը թողնում է երկրագործական պարապմունքը և անցնում է քաղաքներ, մտնում է քաղաքային կեանքը և սկսում է վաճառականութեամբ զբաղվել, նա շատ շուտով սկսում է ջնջվել, անհետանալ, լուծվել ուրիշ տարրերի մէջ։ Եթէ հեռու կօլօնիաներում հայը այդքան սիրահար է երկրագործութեան, որքան աւելի պէտք է աշխատել ամեն միջոցով վառ պահելու նրա մէջ այդ սէրը իր հայրենի հողի վրա։»

—

Մեզ գրում են ՄՕՍԿՎԱՑԻՑ հետեւեալը։ «Ժողովրդական խաղերի մասին ձեր գրված յօդուածների բովանդակութիւնը այս օրերս հաղորդեցի այստեղ իմ մի քանի վրացի բարեկամներին։ Ձեր դատողութիւնները պատմական փաստերի վրա հիմնված նրանք գտնում են շատ ճիշդ, միայն փոքր ինչ վիրաւորված են և աւելորդ են գտնում Գլդանէլիի կամ Գօղաձէի պէս անձնաւորութիւնների մասին ձեր արտասանած կօպիտ և վայրենի էպիտէտները։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐՑ

—

Ֆրանսիական մինիստրական դժուարութիւնները աւելի էլ խրճճում են եգիպտական գործերի ընթացքը, գրում է „Голосъ“ յուլիսի 22-ից։ Դեռ երկար ժամանակ կանցնի, մինչև կորոշվի Ֆրանսիական նոր մինիստրութեան եգիպտական քաղաքականութիւնը և մինչև այդ հարցի պարզվելը Բ. Դուռը օգուտ կը քաղէ իւրաքանչիւր յարմար դէպքից եգիպտական հարցը աւելի էլ խրճճելու համար։ Այդպիսի գործողութիւնների նպատակը հասկանալի է։ Թիւրքաց կառավարութիւնը դեռ ևս յոյս ունի անհամաձայնութիւն սերմանել եւրոպական պետութիւնների մէջ, իսկ Ֆրանսիայի այժմեան չէզոք դրութիւնը աւելի էլ յուսադրում է Բ. Դրանը, որ նա կը հասնի իր նպատակին։ Թիւրքաց կառավարութեան առաջին քայլը այդ ուղղութեամբ նրա տուած պատասխանն է Անգլիային, որ պահանջում էր թիւրքաց արշաւող զօրքերին Եգիպտոս ուղարկելուց առաջ ապստամբ յայտնել Արաբի-փաշային։ Անգլիական պահանջին Բ. Դուռը պատասխանեց, որ Արաբի-փաշային ապստամբ յայտնելու հարցը իրան չէ վերաբերում, այլ կօնֆերենցիային և որ այդ պահանջը պէտք է յայտնվեր Թիւրքաց հաւատարմատարներին կօնֆերենցիայի մէջ։ Այդպիսի պատասխանը ամենից առաջ տուած է պետութիւններին ակնարկելու համար, որ Անգլիան իր բռնած ընթացքով խանգարում է եւրոպական համաձայնութիւնը, որի վրա հիմնված էր եւրոպական պետութիւնների միջամտութիւնը եգիպտական գործերին։ Նոյն միտքը կունենայ Բ. Դրան շրջաբերականը, որի հրատարակման մասին արդէն լուր է տարածված և որ մատնացոյց կը լինի այն արգելքների վրա, որոնց դնում է Անգլիան Թիւրքաց զօրքերի արշաւանքին Եգիպտոսի վրա։ Եթէ ճշմարիտ կը հրատարակվի այդպիսի շրջաբերական, դա ուղղակի դանդատ կը լինի Անգլիայից Եւրոպային։ Հեշտ չէ երևակայել, թէ ինչպիսի ընդունելութիւն կը գտնի այդ դանդատը, որի նպատակն է թշնամութիւն սերմանել Անգլիայի և եւրոպական միւս պետութիւնների մէջ։

Երևի նոյն աղբիւրից են գալիս և այն լուրերը, որ Ռուսաստանը մտադիր է մասնակցել կօնֆերենցիային միայն Սուէզի ջրանցքի հարցի քննութեան ժամանակ։ Կարելի է հաւատացած լինել, որ Կ. Պոլսի մէջ շատ կը ցանկանային ռուսաց կառավարութեան հայեացքների այդպիսի փոփոխութիւնը կօնֆերենցիայի մասին, բայց անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնական Զարլզ Դիլկ արդէն յայտնեց պարլամենտի մէջ, որ Ռուսաստանի ներկայացուցչին հրահանգներ են տուած մասնակցում է ձեզ, դուք ազատ էք ամեն պարտաւորութիւններից մինչև այն ժամանակ, մինչև որ չէն զարթնի ձեր մէջ ապաշխարութեան և զղջութեան զգացմունքները և մինչև որ չէք ըղջայ ձեր սարսափելի, աննկարելի վարմունքը։

Եւ արժանաւորութեամբ ու ազնիւ բարկութեամբ լի երկու շարժուածքով, նա փակեց գերեզմանոցի դռները։ Մի փոքր ժամանակ ամբոխը չէր շարժվում, բայց յետոյ սկսեց ցրվել։ Էլի մի քանի րոպէ... և եկեղեցու առաջ գտնվող հրապարակը դատարկ էր։

Յաղեցրու նրա ծարաւը, ում կոկորդը չորացել է։ Եւ Փրկչի այդ պատգամը կենդանի էր ձեր քահանայի սրտում։ Հաղիւ հանդստութիւնը վերականգնված էր, նա մեծ կրակ վառեց գերեզմանոցի չիրիմների մէջ տեղ, և հրէական մսագործը քահանայի հրամանով մորթեց հորթը, գառները և թռչունները քաղցած հրէաների համար։ Շուտով ամեն բան եփված և խորոված էր, իսկ կանայքը դոմերիցը կաթ և ջուր բերին։

Կանգնեց կէսօրը—զանգակները լռում էին, վրա հասաւ երեկոն—նրանք դեռ ևս լռում էին, չէին լսվում նրանց գեղեցիկ, մխիթարութիւն բերող հնչիւնները, որ կարծես, երկնքիցն էին իջնում, միւս առաւօտն էլ։

Համայնքը անիծված էր և մերժված երկնքից և տանում էր այդ պատիժը ծանրութեամբ և տրտմութեամբ։

Բերեցին երեխային մկրտելու համար, և քահանան հրաժարվեցաւ նրան մկրտել. փողերի ձայներով և սրինգի վրա ածելով եկան հարսը և փեսան պսակվելու համար, յաւիտենական դաշն կապելու համար, քահանան հրաժարվեցաւ նրանց օրհնել. սարսափելի լացով և թաղման երգեցողութեամբ բերեցին ննջեցեալին թաղելու համար, և քահանան չը թաղեց նրան։ Երեք օր և երեք գիշեր անցրին թշուառ աքսորեալները գերեզմանների մէջ,—երեք օր և երեք գիշեր տանջվում էին գիւղացիները։ Այն ժամանակ քահանայի մօտ եկաւ դատաւորը, և համայնքի կողմից յայտնեց խորը հառաչանքով, որ ամբողջ համայնքը պատրաստ է ապաշխարել։

—Աւելին ես ձեզանից չեմ էլ պահանջում,—ասեց հեզութեամբ ծեր քահանան։—Կատարեցէք միայն Փրկչի պատգամները։

Դեռ նոյն գիշերը գիւղի միջով անցաւ մի օտարոտի բազմութիւն։ Ցիսուն գիւղական սայլեր, որոնց վրա դիզված էին իրանց կանանցով և երեխանցով թշուառ թափառականները, և որոնց շրջապատել էին զինուորված և ձիու վրա հեծած գիւղացիները—պաշտպանելու համար, առաջ էին գնում դանդաղ քայլերով, իսկ առաջից գնում էր ծեր քահանան խաչը ձեռքին։

Ամբոխը այդ ձեով գնաց և հրէաներին քաղաք հասցրեց, ուր ընդունեցին նրանց իրանց հաւատակիցները։

Արդեօք երկար ժամանակ կը տևի այդ։

Նրանք կերթան յետոյ Սպանիա և աւելի հեռու ովկիանոսի միջով—այնտեղ, ուր փայլում է ազատութեան աստղը։

Եւ կրկին թափառել ու թափառել։

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Ռուս յայտնի գրող Եւգէնի Մարկով, «Новое Время» լրագրի մէջ մի շարք յօդուածներ է տրպում Կովկասում իր արած ճանապարհորդութեան տպաւորութիւնների մասին։ Մենք կը քաղենք միայն հեղինակի յօդուածից այն տպաւորութիւնները, որ նրա վրա գործել են հայերը։ Հայոց Վանքի մայր եկեղեցին և առաջնորդարանը նկարագրելուց յետոյ, պ. Մարկով անցնում է հայոց թվին։ Հայերը Թիֆլիսում, ասում է նա, մինչև աւելի բազմաթիւ են եղել, քան թէ տանտէր վրացիները։ Ցուրնէֆոր 1703 թվին հաշւում է Թիֆլիսում 14,000 հայեր, 2,000 վրացիներ և 3,000 մահմետականներ։ Երմօլովի ժամանակ 1825 թվին, ասպետ Գամբայի վկայութեան համեմատ, Թիֆլիսում 15,000 հայեր կային, իսկ վրացիք միայն 9,000 էին։ Այժմ ևս, 1879 թուի միօրական ժողովրդագրութեամբ երկսեռ հայերը Թիֆլիսում հաշւում են 37,000 հոգուց աւելի, իսկ զանազան ցեղերին պատկանող վրացիներին հաշւում են 21,000 հոգուց միայն աւելի։ Հեղինակը այդ բանը բացատրում է նրանով, որ վրացիք պատերազմական դասակարգ կազմելով, անդադար ոչնչանում էին ներքին անընդհատ խռովութիւններից և ասիական ժողովրդների յարձակումների ժամանակ։

Հայերը աւելի խաղաղ դաս էին կազմում, քան թէ վրացիք, պարապում էին առևտրով և արդիւնաբերութիւններով, այդ պատճառով նրանցից աւելի քիչ էին վախենում յաղթողները, և նրանք այնքան չէին ոչնչանում արշաւանքների և պատերազմների ժամանակ։

Բացի դրանից Վրաստանի նոյն իսկ թագաւորները և իշխանները ծախում էին իրանց գեղեցկութեամբ յայտնի վրաց կանանց և երեխաներին արևելքում և Կ. Պոլսում. այդ առևտուրը պատճառ էր դառնում ազգաբնակութեան սակաւանալուն և ընտանեկան բարոյականութեան ընկնելուն, որ առհասարակ աւելի թոյլ է վրացիների մէջ, քան թէ հայկական խիստ ընտանիքի մէջ...

Պէտք է այն ևս ասել, որ հայերի անգին հոսանքի գլխաւոր պատճառը Թիւրքաց Հայաստանի մոտիկ հարևանութիւնն էր. Գամբա անձամբ ականատես էր այն բանի, թէ ինչպէս ռուսաց տիրապետութեան սկզբում Թիւրքաց հայերը, Թիւրքաց ամեն տեսակ անօրէնութիւններից և անկարգութիւններից փախչելով. բազմութեամբ գաղթում էին Թիֆլիս և Վրաստանի այլ քաղաքները ռուսաց օրէնքների հովանաւորութեան տակ մտնելու համար։

ցել կոնֆերենցիային առաջվայ հիմունքների վրա, իսկ բրիտանական արտաքին գործերի մինիստրի օգնականը այդպիսի յայտնութիւն չէր անի, եթէ հաւատացած չը լինէր իր հաղորդած փաստի ճշդութեան մասին:

Բ. Դրան գործադրած փորձը Արաբի-փաշայի մասին Անգլիայի արած պահանջի առաջն առնելու համար նոյնպէս չաջողեցաւ: Նոյն Զարլզ Դիլկ յայտնեց պարլամենտին, որ բոլոր պետութիւնները պահանջեցին Բ. Դռնից Արաբի-փաշային ապստամբ յայտնել այնպէս որ Թիւրքաց կառավարութիւնը այլ ևս առիթ չունի յետաձգել այն միջոցը, որ նրանից պահանջում է Անգլիան և որ ճշմարիտ անհրաժեշտ է, որպէս զի Թիւրքաց զօրքերի Եգիպտոսի մէջ երեւալը զանազան յոյսեր չը տայ Կայիրէի ապստամբ կողմնակիցներին:

Այս բոլորից յետոյ դժուար է իմանալ, արդեօք կը կայանայ Թիւրքաց զօրքերի Եգիպտոս ուղարկելը թէ ոչ, բայց արդէն մատնացոյց են անում, որ Թիւրքաց կառավարութեան համար հեշտ չի լինի պատրաստել թւով փոքր ի շատէ նշանաւոր զօրաբաժին: Այդպիսի ձեռնարկութեան համար ամենից առաջ փող է հարկաւոր, որի պակասութիւնը Բ. Դուռը զգում է կառավարութեան ընթացող ամենաանհրաժեշտ ծախսերը ծածկելու ժամանակ: Արդէն լուրեր են տարածված, որ այդ կողմից Թիւրքաց կառավարութիւնը արգելքների է հանդիպում: Անգլիայի հետ կռիւ ունենալու կարելութիւնը աւելի էլ մեծացնում է Թիւրքաց զօրքերի արշաւանքի դժուարութիւնները և, շատ կարելի է, որ վերջ ի վերջոյ Բ. Դուռը կը յայտնէ կոնֆերենցիային, որ նա անկարող է կատարել իր յանձն առած պարտականութիւնը:

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

Կ. Պոլիս, 19 յուլիս

Այս շաբաթ կարող էի մէկ քանի երկար նամակներ յուղարկել «Մշակի», նիւթ առնելով Եգիպտոսի մէջ անցած արկածներն: Աչխատութիւնս այնքան դժուար ալ չէր ըլլար քանի որ կարող էի այստեղ հրատարակված լրագիրներու յօդուածները վարպետութեամբ օրինակել կամ պարզապէս թարգմանել և յուղարկել ձեզ իբր իմ մասնաւոր հաւաքած լուրերս: Կարող էի նաև նոյն աղբիւրներուն դիմելով՝ յաւելցունել մասնաւոր դիտողութիւններ, մարգարէանալ անգամ ինչ որ դահլիճներն չեն դիտեր դեռ և ներկայացնել բոլոր ասոնք «Մշակի» ընթերցողաց և սպասել որ նոքա իմ քաղաքագիտական տաղանդիս վրայ զարմացման հառաչանքներ արձակեն: Բայց ուրիշի հողի վրայ օրսալ դեռ սովորութիւն չէ դարձել ամենուն և սիրով կը թողուք այդ պատուաւոր և դժուար զբաղմունքն անոնց՝ որք արդէն մասնագիտութեան վկայական ստացած են հասարակութենէն, իբր ուրիշի ստացուածքը սեպհականող քաջ վարպետներ:

Նեղոսի եղերքներն անցած այժմեան եղելութիւններն ինչ տեսակ վերջաւորութիւն ունենալն դեռ անորոշ է: Հազար ու մէկ անակնկալ դէպքեր կրնան կերպարանափոխել զայն: Ոչ ոք կարող է ուրեմն հիմակուընէ մի բան նախագուշակել և ըսել թէ ինչ անուղղակի օգուտ պիտի բերէ մեզ արևելեան խնդրոյն այս նոր դարձուածքը: Բնական է որ դուք ևս մեզ նման անձկանօք կը հետևիք այդ խաղացուած մեծ խաղին մանրամասնութեանց, բայց ձեր այդ հետաքրքրութիւնն յաղեցնելու պաշտօնն բոլոր աշխարհիս լրագիրք և հեռագիրք կատարելով՝ չը գիտեմ թէ այստեղի մի ազգային թղթակից ինչ բան կարող է յաւելացնել այլ լուրերուն կամ որ դիւանագիտական գաղտնիքին ծանօթանալու պատեհութիւնն ունի որ աւետէ ձեզ: Ուրեմն առանց փողոցները ինկած լուրերը աւելու և մինչև այդ տեղ յուղարկելու, նախապատիւ է ինձ չը շեղիլ մեր ազգային գործերէն: Մենք արդէն շատ անգին ժամանակներ կորուսած ենք միմիայն դիտելով, պառաւ կանանց պէս, թէ ինչ կանցնի դրացինի տանը:

Անցեալ օր ծանօթ և ժրաջան գործիչներէն մէկուն հետ խօսակցութեանս ժամանակ, կը դանգատէի որ ոչինչ կը գործուի ազգային ներկայ կացութեան դարման տանելու, անիշխանութեան վերջ տալու համար: «Ախպար, պատասխանեց ինձ, կեցիր նայինք սա Եգիպտոսի գործը ինչ պիտի ըլլայ»: Դիտելու արժանի բան է որ պօլսեցի հայը աչխարհիս մէկ անկիւնը դարձած եղելութեան մը չափազանցօրէն կը հետաքրքրուի միշտ և ձեռքերը ծալլած կը սպասէ որ իրէն ալ օգուտ մը ծագի անկէ: Սա լաւ պատրուակ մընէ մեր ներքին գործոց մասին անհոգ մնալու: Մենք չենք հասկանար թէ քաղաքական ինչ դէպք ալ որ պատահի՝ որովհետև նորա վերջաւորութիւնը անորոշէ միշտ, մենք պէտք չէ վայրկեան մը անգամ դադարենք մեր անհրաժեշտ պէտքերը հոգալէ: Եթէ շարունակենք այսպէս երկնքի ամեն անցած ամպէն կաթիլ մը ջուր յուսալու՝ ոչ մէկ ժամանակ մենք պատրաստ, կազմակերպեալ ազգ մը պիտի ըլլանք, եթէ մէկ օր մենք ալ ազգայ կարգը անցնելու հրաւէրն ընդունինք:

Գիտէք արդէն որ մեր խելացի երեսփոխանները ըն պատրիարքի հրաժարականի խնդրով լեռն ամիս զբաղելէ վերջը՝ տեսնելով որ ոչինչ կարող են ծնանելու, պաշտօնապէս դիմել Բ. Դրան, յայտարարելով ամենայն յարգանօք որ նորա հրամաններուն կը սպասէ ազգը: Արդ՝ եթէ չեմ սխալի, մէկ ամիսէ աւելի է որ վարչութիւնը դիմած է ձէվտէթ-փաշային և նա ևս խոստացած է նախարարաց ժողովին ներկայացնել խնդիրը: Բայց Դուռը որ այս տեսակ խնդիրներն չուտով վերջացնելու ամենեին հակամիտ չէ արդէն, դեռ դայն նկատողութեան անդամ առած չերեւիր և մենք այդ անհոգութիւնը կը մեկնենք ըսելով որ աւելի կենսական հարցեր նախարարաց վայրկեաններն զբաւած են այս միջոցիս: Սակայն Թիւրք կառավարութիւնն այս օրէս սկսելով, դժուարութեանց երկար շղթայ մը ունի իր առաջը որու այդ Եգիպտական հարցը առաջին օղակն է միայն: Մենք պիտի սպասենք ցայտիտեան որ Դուռը իր մէկ պարապոյ ժամանակին վերջացնէ մեր գործն ալ: Մինչև այն ատեն պիտի մնանք այսպէս անգլուխ և անտուտ: Դեռ չեն համոզուած որ Ներսէսը անդառնալի կերպով հրաժարած է: Մոռացան արդեօք որ մնալու հրաւէրն երբ ժամանակին Դուռը ըրաւ Ներսէսին, անլսելի եղան և սուլթանի թիկնապահին իսկ պատասխանեց նա թէ չունի կարողութիւն այլ ևս այս բեռը տանելու: Ուրեմն ինչ որ ալ որոշէ նախարարաց ժողովը, եթէ երբեք զբաղի այդ գործով, ինչ ձեւով որ հրաւիրէ ձէվտէթ-փաշա զՆերսէս եպիսկոպոս որ իր հօրը անհովիւ չի ձգէ, բնաւ չը պիտի ազդեցութիւն ունենայ նորա որոշման վրայ: Եւ սակայն դեռ այնպիսի տխմարներ կան որք կը գրեն թէ Ներսէսի ուզած բանն է կրկին վերադառնալ ի Քումքաբու, միայն թէ մինչև ցայժմ եղած ստիպումներն և համակրական ցոյցերն բաւական չը համարելով աւելի բարձրէն եկած և աւելի ստիպողական հրաւէրներուն կը սպասէ նա: Ո՛րչափ քիչ մարդ կը ճանաչէ զՆերսէս: Մի քիչ առաջ «անդառնալի» բառը գործ ածեցինք հրաժարականի մասին: Սխալ է այդ: Պէտք է Ներսէս մնայ առանձնութեան մէջ, մինչև որ կերպով մը Օժիասի ախոռներն մաքրուին:

Բ. Դրան դիմելը բոլորովին ժամանակի կորուստ մը պէտք է համարել և մի նախարարի անորոշ պատասխանէն օգուտ քաղելով պէտք է ժամ յառաջ վերջ դնել այս անիշխանութեան և նորոգել ի հիմանց երեսփոխանական ժողովը, ապա թէ ոչ քաղաքական տագնապն մէկ կողմէն, ազգային վարչութեան վատթար վիճակն միւս կողմէն, ալ թիւրքիաբնակ հայուն համբերութիւնն սպառած է և եթէ իր վճռաեալ կացութիւնը քիչ մը ժամանակ տակաւին շարունակէ՝ իր մէջ բաւական ոյժ չը պիտի մնայ փոքր ինչ կազմակերպուելու համար անդամ և այն ժամանակ պիտի հանդիսատես ըլլանք մի զարհուրելի դահավիժութեան որ ամեն թոյլ, մոլի և ստրկացեալ ազգաց վերջաւորութիւնն է:

Յուսահատութիւնն է, ըսինք, այժմ Թիւրքիաբնակ հայոց սրտին մէջ տիրողն: Արդ՝ վճռած մի ժողովուրդ երբ չէ կարող բռնութեամբ իր գործը քաշեցնել, կաղօթէ որ մի անակնկալ պատահար, մի արմատական փոփոխութիւն զայ շնորհել իրեն դոնէ իր նիւթական փրկութիւնը: Այդ է ճիշդ այժմ այս տեղի հայ ժողովրդեան իղձն ու տանջանքն, և այդ դաղափարը առաւել ևս կը ժպտի իրեն՝ որ այժմեան տեղի ունեցած քաղաքական կարևոր անցքերն հաւանական կընեն այդպիսի մի վերջաւորութիւն:

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Եգիպտոսից անգլիացի գեներալ Գէվիտ հեռագրում է Լօնդօն, որ անգլիական զօրքերը զրաւեցին Սուէզ քաղաքը առանց ընդդիմադրութեան հանդիպելու եգիպտական զօրքերի կողմից: Եգիպտական զօրքերը փախան:

—Գեներալ Ալիսօնի Ալէքսանդրիայի շրջակայքում առած հետախուզութիւնները համոզեցրին նրան որ Ալէքսանդրիայի մօտ կենտրօնացած եգիպտական զօրքերի թիւը շատ աննշան է:

—«Ռէյտերի գործակալութիւնը» հեռագրում են Ալէքսանդրիայից որ Տուլբա-փաշան գտնվում է Կաֆրդուվարում: Արաբի-փաշայի սվիտայում գտնվում է մի հատ եւրօպացի, Նիեէտ անունով մի չվէյցարացի, որ մի ժամանակ Խալիմ-փաշայի ադէնտ էր:

Բայց Թիֆլիսի հայերը այնքան նմանեցրին իրանց վրացիների հետ, որ շատերը նրանցից միայն Նորերումս սկսեցին հայերէն սովորել, իսկ ահագին մեծամասնութիւնը խօսում է և ապրում է վրացերէն: Այդ հանգամանքը, ի հարկէ, շատ օգնեց նրանց տիրել վաղուց և ամբողջապէս վրաց մայրաքաղաքին, իրանց ձեռքը առնելով ամբողջ առևտուրը, փողային ամբողջ ոյժը:

Զը նայելով հայերի կենցաղավարական սովորութիւնների և ճաշակների խորը արևելեան լինելուն, որ նրանք ժառանգել են համարեա բիւզանդական ժամանակներից, ժամանակակից Թիֆլիսի հայերը վճռողական ձգտումն են ցոյց տալի դէպի եւրօպական լուսաւորութիւն և այդ հանգամանքում կարողացան փառաւոր գործնական յաջողութիւններ ցոյց տալ:

Առևտրական ընդունակութիւններով և իրանց ձեռնարկութիւնների համարձակութեամբ հայերին հաւասար ամենի վրա կարելի է դնել Եւրոպայի և Ամերիկայի ամենաանարագէտ առևտրական ազգերի հետ: Նրանք փող չեն խնայում իրանց որդոցը ամեն տեսակ հիմնաւոր մասնագիտութիւն սովորացնելու համար արտասահմանում, որ կարող է գործնական օգուտ տալ և որը մօտ է իրանց շահերին: Թիֆլիսում արդէն կարելի է հանդիպել բազմաթիւ երիտասարդ հայերին, որոնք գեղեցիկ կրթված են, ամեն տեղ եղել են, և կատարելապէս սեփականացրել են եւրօպական կեանքի և մտքերի ուղղութիւնը:

Թէպէտ նրանց վրա մնում է ցեղի տիրապետող յատկանիշը—մի փոքր միակողմանի ձգտումն դէպի շահը, բայց դա արդէն ընդունում է արևմտեան բուրժուազիայի փափկացրած և ազնուացրած ձևը:

Հայերի մէջ այժմ կան թէ գիտնականներ և թէ գրողներ. հայերը թատրոն ևս ունեն, որ միշտ լի է լինում ժողովրդով. առանձին «հայոց ազնուական ժողովարան» կայ, առանձին հայկական լրագիրներ են հրատարակվում և հայ գրականութիւններ կան. ինձ հաւատացնում էին, որ հայոց գրականութիւնը, չը հաշուելով պատմական թանգագին յիշատակարանները, շատ հարուստ է այժմ Եւրոպայի հռչակաւոր գրողների, մանաւանդ բէալական ուղղութիւն ունեցող, օրինակ Դարվինի, Բօկլի, Լիւիսի և այլոց հեղինակութիւնների թարգմանութիւններով: Հայերը շատ ուսումնարաններ ունեն նոյնպէս: Որ հայ ժողովուրդը առհասարակ ընդունակ է դէպի գիտական աչխատութիւնները ապացուցվում է ոչ միայն հայերի գրական խելքով, բայց և նրանց գիտնական գործունէութեան մի քանի փաստերով, ինչպէս օրինակ, հին ժամանակներից Վենետիկում գոյութիւն ունեցող գիտնական հայ Մըխիթարեանների միաբանութեամբ, որ յայտնի է ամբողջ Եւրոպայի մէջ իր ծանրակշիռ հետազօտութիւններով և հրատարակութիւններով....

Եւրոպացած հայի տիպը շատ գեղեցիկ և համակրելի է: Նրա մէջ անհետանում է գիշատիչ թռչնի ագահ հայացքը, երեսի գծագրութեան այն կոպիտ սրութիւնը, որոնք յատուկ են սկզբնական, քաղաքակրթութեան անմասն, հայ չարչու տիպին, որը ճանաչում է միայն արծաթ բուբլու հաւատը, իսկ դրա հետ միասին սև փայլուն մազերի առատութիւնը, սև փայլուն թացութիւնը աչքում, սպիտակ փայլուն ատամները կարմիր շրթունքներում և առողջ կարմրութիւնը թուխ այտերի վրա, օրգանիզմի ամբողջ ուժը և զօրութիւնը, որով զանազանվում են հայերը իրանց դանազան հարևաններից,—այդ բոլորը շատ կարելի է բացատրվում է հայերի չափաւոր կեանքով և ընտանեկան բարքերի խստութեամբ,—մնում են բոլորովին անձեռնմխելի հայ լուսաւորված երիտասարդութեան մէջ:

Խոստովանում եմ, նայելով այդ հանելուկ ժողովրդի վրա, որը կարողացել է ոչ թէ դարերի ընթացքում, այլ հազար տարիներ պահպանել իր անունը, իր աւանդութիւնները, իր կենցաղավարութեան առանձնութիւնները, որը իր ընդունակութեան և հաստատութեան ուժով տիրապետել է իր յաղթողների և նուաճողների վրա ամեն տեղ, որտեղ էլ ապրում է նա, ես բաւական փոքրոգի եզրակացութիւններ էի դուրս բերում Կովկասի մնացած ցեղերի ապագայի մասին: Ամենից շատ ինձ զարմացնում էր հայերի աքանչելի ֆիզիկական առողջութիւնը:

Ես բոլորովին չէի հանդիպում հիւանդոտ և թուլակազմ հայերին: Եթէ դուք տեսնում էք հային, ուրեմն կը նշանակէ, որ դուք տեսնում էք ծաղկափթիթ, լաւ և հարուստ ուժերով օրգանիզմ: Նրանք բոլորն էլ կարմիր են, բոլորն էլ հաստ են, բոլորն էլ զօրեղ են, կարծես թէ ջոկած լինեն, թէ տղամարդիկը, թէ կանայքը և թէ երեխաները:

Այդ ցեղական, մարմնական առողջութեան հազար տարիներով հաստատված ուժը շատ բան արժէ, խոստանում է և բացատրում է շատ բան:

Դժուար է ճանապարհ չը տալ այդ խելացի, հաստատ և մի և նոյն ժամանակ եռանդոտ ոյժին, որը չէ ճանաչում նեարդերի հիւանդոտ ցնցումները, մութը կասկածները, առհասարակ մտքի և սրտի ոչ մի տեսակ ցնորք, որը ամեն բանի վրա նայում է համարձակ, անյողդողդ, գործնական մարդու անձնավստահ աչքով, որը ամեն տեղ և միշտ ուղղում է իր հայացքը դէպի այն կողմը, որտեղ որ կարելի է մի բան ձեռք բերել...

Զարմանալի չէ, որ հայի այդպիսի գործնական յատկութիւնների շնորհիւ, առևտրականների և արհեստաւորների այդ ազգը, որ միշտ հեռու էր մնում պատերազմից, ծնեց իր շրջանից ռուսաց կովկասեան զօրքի ամենալաւ զինուորներին, Բեհրուտօվներին, Տէր-Ղուկասօվներին, Լազարեվներին և այլն:

Զարմանալի չէ նոյնպէս, որ հայերի գործնական յատկութիւնները այն աստիճան ապահով դարձրին Կովկասի այլ ցեղերի առևտրական մրցութիւնը նրանց հետ, որ չը խօսելով արդէն նրանց ձեռքով անտեսաբար հարստահարված վրացիների, թուրքերի, ռուսների, մինչև անգամ հրէաների մասին, որոնք աշխարհի ամեն կողմերում միաձայն արտաքնջ են բարձրացնում նրանց հարստահարութեան ճարպիկութեան դէմ, հայի ներկայութեամբ դառների նման են իրանց պահում և բոլորովին վատնգաւոր տարր չեն կազմում, որպէս չնչին փոքրիկ մէնները մեծ մէնների ներկայութեամբ....

Ինչ և իցէ, բայց հայ ազգի զարմանալի առողջութեան մէջ չէ կարելի չը տեսնել նշան նրանց ապագայի յաջողութիւնների և յառաջադիմութիւնների որ ամենաճիշդ ապացոյց է այն բանի, որ նրանց հասարակական դերը դեռ ևս չէ վերջացել....

Բայց այդ բանի հետ, ի հարկէ, նախ և առաջ անհրաժեշտ է ցանկանալ թէ հայերի, թէ այն երկրի բարօրութեան համար, ուր ապրում են նրանք, որ այդ ազգի զարմանալի գործնական ուժերը, որ հազար տարիների ընթացքում պահպանել է իր ֆիզիկական կուսութիւնը,—ներշնչվեն վերջապէս ոչ միայն անձնական շահի զայթակղութեամբ, որ այդքան յաճախ դարձնում է հային անհոգի և անխիղճ հարստահարող, որի համար օտար են ամեն բարոյական սկզբունքներ, բայց և լուսաւորված եւրօպական մտքի բարձր հասարակական իդէալներով:

Որքան աւելի վճռողական քայլեր կանի այդ ճանապարհի վրա հայ ազգը, այնքան աւելի հաստատուն, աւելի ընդարձակ և, գլխաւորը՝ աւելի պտղատու կը լինի նրա նշանակութիւնը մեր Անդրկովկասի հասարակական ուժերի շարքում....

***

—«Հավասի գործակալութիւնը» հաղորդում է որ յուլիսի 21-ին երեք նաւերի մէջ նստեցին և ուղևորվեցին Կ. Պոլսից դէպի Եգիպտոս թիւրքաց զօրքեր, որոնք բաղկացած են հետևակ զինուորներից և արտիլէրիայից:

—«Ֆրանսիական «Gaulois» լրագրի Բերլինի թղթակիցը հաւատացնում է որ թիւրքաց դեսպանը յայտնեց թէ Բ. Դուռը պատրաստ է ուղարկել 10,000 զօրք Եգիպտոս մի շաբաթվայ ընթացքում, Մուխթար-փաշայի առաջնորդութեամբ: Սուլթանը համոզված է թէ հէնց որ թիւրքաց զօրքերը ոտք կը կոխեն Եգիպտոսի հողի վրա, եգիպտական զօրքերը անմիջապէս կը խոնարհվեն օսմանեան դրօշակի առջև և այդպիսով կարգը կը վերականգնվի, առանց մի կաթիլ արիւն անգամ թափելու:

—Փարիզի և Լօնդօնի պօզիտիվիստական ընկերութիւնները մի հանրագրութիւն հրատարակեցին, որի մէջ բողոքում են ֆրանսիական միջամտութեան դէմ Եգիպտոսի գործերում, ասելով որ եգիպտացիները, ինչպէս ամեն ազգութիւն տան և իններորդ դարում, ունեն իրաւունք քաղաքական անկախութեանը ձգտելու: Հանրագիրը անգլիացիների կողմից սաորագրեց Բիզլէյ, իսկ ֆրանսիացիների կողմից ժամագործ Մանիէն, որ նախագահ է պօզիտիվիստական ընկերութեան: Այդ ընկերութեան գլխաւոր առաջնորդը և նրա հոգեւոր գլուխը Պիէր Լաֆիտ անունով մէկն է:

—Սուէզի ջրանցքի գրաւման հարցը փոքր առ փոքր սկսում է ջոկվել զինված ոյժով Եգիպտոսի գործերի մէջ միջամտութեան հարցից: Սպանիան և Հոլլանդիան յոյս ունեն որ Կ. Պոլսի կոնֆերենցիան նրանց էլ կը հրաւիրի մեծ պետութիւնների ներկայացուցիչներից բաղկացած յանձնաժողովի հետ միասին մասնակցել Սուէզի ջրանցքի պահպանութեան և վերահսկողութեան գործի մէջ:

—Ֆրանսիական հասարակական կարծիքը համակրութեամբ ընդունեց Ֆրէյսինէի մինիստրութեան անկման լուրը, բայց ամենքը հաւատացած են Ֆրանսիայում որ նոր կազմվելի մինիստրութիւնը, ինչ տարրերից և բաղկացած լինի նա, երկարատև չի լինի: Կարծում են որ ֆրանսիական պատգամաւորների ժողովը չուտով լուծվելու է և նոր ընտրութիւններ են նշանակվելու:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կանայք գրաշարներ հին ժամանակներում: Կանանց գրաշարի պաշտօն կատարելը տպարաններում, որ այդքան տարածված է վերջին ժամանակներում, նոր բան չէ, ինչպէս կարող են շատերը կարծել: Դեռ XV դարի վերջում կանայքը գրաշարների պաշտօն էին կատարում տպարաններում: Առաջին տպարանատէր կինը, որի անունը պահպանվեցաւ ապագայ սերնդի համար Շարլոտտա Գիլիարն էր, որը 50 տարվայ ընթացքում տպարան էր պահում Փարիզում և ինքն էլ պարապում էր գրաշարութեամբ: Գուտէնբէրգի այդ հետևողի տպարանում տպված գրքերը յայտնի են իրանց պարզութեամբ և դեղեցկութեամբ:

***

Ստորեկրեայ երկաթուղին Փարիզում: Որովհետև ստորերկրեայ երկաթուղու նախագիծը Փարիզում, նրա ահագին արժողութեան պատճառով, չէ կարելի գլուխ բերել, այդ պատճառով միտք ծագեցաւ ստորերկրեայ երկաթուղի շինել Սէն-Կլուից դէպի Լիոնեան երկաթուղին. ճանապարհը կունենայ բազմաթիւ կայարաններ և կանցնի 38 կիլոմեթր (մօտ $35^1/_2$ վերստ) տարածութեան վրա: Երկաթուղու շինութեան վրա 150 միլիոն ծախսից աւելի չի գնայ: Սակայն է նշանակվելու 50 սանտիմ առաջին կարգի համար, 20 սանտիմ երկրորդ կարգի և 10 սանտիմ երրորդ կարգի համար. այդ գներով յոյս ունեն, որ 400,000 ֆրանկ կը ստանան մէնից, կամ 15,200,000 ֆրանկ մի տարում ամբողջ ճանապարհից:

***

Մենամարտը նեգրուհիների մէջ: Կիլօկից, Հիւսիսային Կարօլինայում, հաղորդում են, որ նորերումս այնտեղ մենամարտ կայացաւ երկու նեգրուհիների մէջ, որոնց սեկունդանտները (վկաները) իրանց սիրեկաններն էին: Այդ մենամարտը, իր սարսափելի մանրամասնութիւններով, մեծ յուզմունք զարթեցրեց քաղաքի մէջ: Երկու սև տիկինները, իրանց կավալերների, Ստեֆանի և Յիսուս Կրուզուպի հետ միասին քաղաքից դուրս զբօսնելու գնացած լինելով, կռուեցին միմեանց մէջ: Այդ կռուի մէջ մեծ դեր էր խաղում խանդոտութիւնը, որովհետև տիկիններից մէկը կասկածում էր միւսին, որ նա կամենում է խլել իր սիրականին: Վերջ ի վերջոյ Զէմիմա Գօրդի, Կրուզուպի սիրուհին, մենամարտի հրաւիրեց իր կարծեցեալ հակառակորդուհուն, Բէս Պէկկիին: Մենամարտը զանակներով պէտք է կատարվէր միւս օրը, մօտակայ անտառում, երկու կավալերների ներկայութեամբ: Մենամարտը կայացաւ, ինչպէս որ պայման էր դրված: Մենամարտողները ձեռքերում զանակներ բռնած յարձակվեցան միմեանց վրա և այնտեղ վերին աստիճանի զզուելի տեսարան ներկայացաւ: Նեգրուհիները կծում էին միմեանց, քաշում էին միմեանց մազերը, և վերջապէս, յոգնածութիւնից և արիւնի կորստից ուժերը սպառելով, անզգայ ընկան մենամարտութեան տեղի վրա: Բժիշկները նրանց անյուսալի դրութեան մէջ գտան:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ե. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի: „Կրանաժդանսկ" շոգենաւը, որ նշանակված է կասպեան նաւատորմը ուժեղացնելու համար, ծով է իջեցրած Աբօի մօտ: Շոգենաւը վաթսուն ոյժ ունի: Լուր ստանալով, որ ամերիկացիները դաշնագիր են կապել կօրէայի հետ, Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան իրանց նաւերն էլ ուղարկեցին նոյնպիսի դաշնագիր կապելու համար. Սվեանիցկի և Ուղեմբօ արձակված են կուրսկեան երկաթուղու ծառայութիւնից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի: Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. $37^1/_2$ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. $50^1/_2$ կ., չորրորդ 90 ր. $12^1/_2$ կ., հինգերորդ 89 ր. $87^1/_2$ կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 213 ր. $50^1/_2$ կ., երկրորդ 211 ր. $75^1/_2$ կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. $37^1/_2$ կ., երկրորդ 89 ր. $37^1/_2$ կ., երրորդ 89 ր. $37^1/_2$ կ., ոսկի 8 ր. 24 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,09 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 257 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՕԶՕՐԻ ԿԱՌՔԵՐԸ

ԳՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԱՅՆ ՕՐ առաւօտ և երեկոյ: Ցոմանկները ծախվում են, Թիֆլիզում **ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ** գրադարանում, Երևանեան հրապարակի վրա, **ԿԱՄԵՐՋԵՍԿԻ ԲԱՆԿԻ** տակը

1—1

ՄՕԾԱԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ

ԴԵՂԸ

24 հատը արժէ 90 կօպ.

ԵՓ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

ԴԷՊՕՅՈՒՄ:

10—10 (շ. է.)

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, գօլովինսկի պրօսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ անդամակցութեան **ՏՈՄՍԱԿ** ցանկացողները կարող են ստանալ Ուսուցչական Ժողովի **ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ**, որ գտնվում է **Պ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԻՅՈՒՄ № 170.**

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ"

издаваемый въ г. Тифлисѣ

(годъ второй)

Открыта полугодовая подписка на журналъ съ 1 іюля 1882 г. по 1 января 1883 года. Цѣна за полгода 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣсяца 3 р. 20 к., на 1 мѣсяцъ 1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года.

Полугодовые подписчики могутъ взносить при подпискѣ 3 р. и черезъ мѣсяцъ еще 3 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ въ администраціи журнала Сололакская улица д. № 10 и въ Москвѣ и въ С.-Петербургѣ въ книжнихъ магазинахъ И. П. Анисимова.

1—10

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ ալքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐԿՈՅԿ

„ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ"

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

ընթերցասէր մանուկների համար

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Ղ. ԱՂԱԵԱՆՑ

վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրագրական խանութում: Գինն է 20 կօպ. օտար տեղերից դիմում են հետևեալ հասցէով: Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

2—25

ԹԷՅ *առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կօպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ Ֆու-չու-Ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկոլադ Ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ Վեբլի, ԹԱՄԲԵՐ բարներիի, կօլմանի նշշշաայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շեվրցի կէս գնով:* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 *և* 100:

13—100

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ *ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ* ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., *չամդաններ* 250—25 ր., *սակվոյաժներ* 1. 30—12 ր., *սունդուկներ ճամդաններ* 250—25 ր., *սակվոյաժներ* 1. 30—12 ր., *սունդուկներ ճամդաններ* 6—35 ր., *մարաններ* (погребцы) 6—25 ր., *սամովարներ* 60 կ.—1.25 ֆունտ., *կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի* 38 ր.—75 ր., *հրացաններ երկու լուլանի* 6—32 ր., *ռէվոլվէրներ ամենայն տեսակ* 3. 50—30 ր., *պատրոնները. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռենգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրօզի.* 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՎ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, *բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էյնէմի. կօֆէ էյնէմի և Միխէլսօնի. պետերբուրգ.* 40—1 ր. 25 կ. *հայելիներ ամենայն տեսակ* 28 կ.—240 ր., *պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների* 1 ր. 20 կ.—25 ր. *դուժինը. գրչակոթներ* 1 ր. 80 կ.—5—60 կ. *դանակ ջիբի* 1—60 կ.—12 ր., *դանակ հացի* 20 կ.—1 ր., *հատը, կուխոնի* 1—40 *մինչև* 3—20 կ. *պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ուլթներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարբկէն* 18 կ., *վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիա, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը* 1—50 կ. *մինչև* 12 ր., *և չայու* 45 կ.—5 ր., *չուտիչկեք* 45 կ.—5 ր., *շամադաններ ամեն տեսակ* 25 կ.—12 ր. *ջուխտ, պոլսայոշկաններ վարշավու,* ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, *ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց* 15 կ.—50 կ. *ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ* 35 կ.—4—50 կ., *հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկրէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ* (бумага) *մատոկի կօճի և շալէ* (гарусъ) *ֆէլչատկեք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գալանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ* 3 կ.,—30 կ., *կոտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ* ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. *և այլն և այլն և այլն:*

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՑԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ *պահեստում.* (въ складѣ) *միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

104—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Іюля 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.